յաստան), Լ. Ջորբաջյանի (Ֆիլիպոս Ջ. Սիմվոլ, առասպել և ճարտասանություն. Մշակութային քաղաքականությունը հայ-ամերիկյան բնակչության մեջ, Նյու Յորք, 1989) և Է. Հովհաննիսյանի (Գրիգորյան Մ. Միջանցք, Նյու Յորք) դրախոսականներով։

Պատմ. գիտ. դոկտոր Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ հաղթանակների, անտեսական-քաղաքական ու մշակութային փայլուն հաջողությունների կողքին արձանագրված են բազմաթիվ մեծ ու փոքր աղեաներ, կոտորածներ ու բռնագաղթեր, որոնք շլատել են նրա ամբողջականությունը։ Սակայն առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ 1915 թ. ապրիլյան եղեռնը գերազանցեց բոլոր դրժբախտությունները իր ծավալով, աննկարագրելի սարսափներով, արագ գործադրումով ու վայրագությամբ։ Երիտթուրքական ոճրագործները որոշել էին վերացնել հայ ժողովրդին պատմական բեմից և վերջնականապես լուծել «Հայկական հարցը»։

Հայ ժողովրդի գլխին պայթած փոթորիկը բոլորից աստ արձագանք գտավ բուլղարական մամուլում, որը ուշադրությամբ հետևվում էր Թուրքիայում կատարվող անցուդարձին։ Մայրաքաղաքի՝ Սոֆիայի համարյա բոլոր թերթերը անդրադառնում էին Հայաստանի ողբերգական վիճակին։ Բազմաթիվ թերթերի էջերում սուր քննադատական հոդվածներ լույս տեսան Երիտթուրքերի բարբարոսությունների դեմ։ Այդ բոլորը բուլղար ժողովրդի բազմադարյան բարեկամության ու եղբայրության նոր արտահայտությունն էր, որոնք ստեղծվել, փայփայվել ու զարգացել էին օսմանյան ծանր լծի պայմաններում։

Մեծ եղեռնի նախօրեին Երիտթուրքերի կառավարությունը բոլոր միջոցներով ձգտում էր վերացնել այդ պատմական կապերը հայ և բուլղար ժողովուրդների միջև, դիմելով զանազան խարդախությունների ու պրովոկացիաների։

1915 թ. փետրվարին Ռուսե քաղաքում Թուրքական մզկիթի բակում տեղի ունեցավ հրդեհ, որը տեղի Թուրքերը վերագրեցին հայերին։ Բուլղարական քննչական մարմինների ստուգումը պարզեց, որ դա զրպարտություն էր։ Բուլղարական պետական մարմինները պատուեցին հանցագործներին և հայտարարեցին, որ նման երևույթներ կրկնվելու դեպքում ստիպված կլինեն դիմել ավելի խիստ միջոցների։ Միաժամանակ բուլղարական կառավարությունը Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանի միջոցով հայտնեց իր բողոքը հայկական տեղահանումների ու ձերբակալումների դեմ, ավելացնելով, որ հայերի նկատմամբ հալածանքներն ու կոտորածները շարունակվելու դեպքում Բուլղարիայի և Թուրքիայի հարաբերությունները կսրվեն։

1915 թ. ապրիլից Բուլղարիայի բոլոր հայաշատ քաղաքներում լայն շարժում ծավալվեց հայ ժողովրդի ցեղասպանության դեմ։ Սլիվեն, Շումեն, Ռուսե, Պլովդիվ, Վառնա, Ստարա-Զագորա և այլ քաղաքներում բուլղարների և հայերի համատեղ բողոքի ժողովներ ու միտինգներ կազմակերպվեցին։ Թուրքական նախճիրների դեմ խնդրագրեր ու բանաձևեր էին ուղարկվում բուլղարական կառավարությանը, պահանջելով նրա միջամտությունը այդ ոճիրների դեմ[1]։

Այդպիսի մի ժողովում, որը տեղի ունեցավ Ռուսե քաղաքի հայկական համայնքի ղեկավարության հրավերով, հետևյալ դիմումն ուղարկվեց կառավարության նախագահ Ռոդոսլավովին. «Ահա տարի մըն է, որ հայ ժողովուրդը ենթակա է բնաջնջման Թուրք կառավարության կողմեն։ Հակառակ մեր ժողովուրդի օրինական ընթացքին Թուրք պետության հանդեպ, կառավարությունը սոսկալի հալածանքով, բռնություններով ու չարդեր։ով կոչնչացնե խաղաղ հայ ազգաբնակչությունը։ Հատուկ պատրաստված ծրագրով ան սիստեմատիկ կերպով կհանե ամբողջ շրջաններու հայերը և կաքսորե Փոքր Ասիայի ամենախուլ անկյունները, իսկ հայ օջախները կդրկե մահմեդականներ և քուրդական խմբեր, պարպելու համար հայկական գավառները հայ տարրերեն։ Վաղվան զարհուրելի կատաստրոֆի նախօրյակին մենք Ռուսի հայերս հավաքվելով այսօր սգալու համար մեր թանկագին նահատակ զոհերը, կդիմենք այսօր Բուլկարիայի, կոչում կընենք իր ամենանվիրական զգացումներուն և կխնդրենք, որ ինչպես միշտ, այս անգամ ալ միջամտե Թուրք կառավարու-

1 «Հայաստան», Պլովդիվ, 24 փետրվարի 1915։

թյան առջև դադարեցնելու համար հալածանքները ընդդեմ խաղաղ հայ ժողովուրդին Դուրք կայսրության սահմաններու մեջ»[2]։ Այդ օրերին բուլղարական բոլոր մինիստրություններին այդպիսի բազմաթիվ նամակներ ու հեռագրեր էին ուղարկվել ինչպես երկրի ներսից, այնպես էլ մյուս գաղթավայրերից։

Մեծ եղեռնի կապակցությամբ բուլղարական մամուլի էջերում լույս էին տեսնում բազմաթիվ առաջադեմ, հայասեր հեղինակների հոդվածներ, ուղղված թուրքական բարբարոսությունների դեմ։ Այդ օրերին «Балканска трибуна» թերթի էջերում կարդում ենք. «Բազմադաշտում իրենց անհաջողություններից կատաղած և պատասխանատվությունից խուսափելու համար երիտթուրքերը գարշելի խաղ են խաղում։ Մեղադրելով հայերին, որ նրանք են պատճառը իրենց պարտությունների, դրդրում են թուրքերին հայերի դեմ։ Այն, ինչ տեղի է ունենում Կոստանդնուպոլսում և Հայաստանում, ամենավառ երևակայությունն էլ չի կարող պատկերացնել։ Հայ մտավորականության ծաղիկը բանտերում է։ Կոստանդնուպոլսում կախաղաններ են կանգնեցնում։ Ջոհվում են ժողովրդի լավագույն զավակները։ Իսկ ամենասարսափելին այն է, որ բռնի միջոցներով տեղահան է արվում հայ ժողովուրդը իր պապենական գյուղերից ու քաղաքներից, աքսորվելով հեռավոր վայրեր։ Եվ այս բոլորը կատարվում է իթթիհատական կառավարության հրահանգներով, որը գլխավորում են էնվեր փաշաներն ու Թալեաթ բեյերը։ Համոզված ենք, որ այդ բոլորը վերջանալու է հայ ժողովրդի ազատագրումով։ Համոզված ենք, որ հայերը տոկալու են իրենց յուրահատուկ ստոիկությամբ, իսկ Թուրքիան անխուսափելիորեն պարտվելու և ապրելու է իր վախճանը»[3]։

«Воля»-ի էջերում կարդում ենք. «Ցավատանջ հայությունը մեզ սրտամոտ է և մենք չենք կարող անտարբեր մնալ այս օրերին նրա նկատմամբ։ Հայ ժողովուրդը բալկանյան պատերազմի ժամանակ հերոսներ տվեց Մակեդոնիայի ազատագրման համար։ Նրանք մարտընչեցին թշնամու դեմ այնպես, ինչպես Մակեդոնիայի և Բուլղարիայի զավակները։ Մենք գարեր շարունակ անկաքտելի, արյունակցական կապերով պայքարել ենք օտար լծի դեմ»[4]։ Այնուհետև նույն թերթի էջերում, մի այլ հոդվածում կարդում ենք. «Ամեն մի բուլղար կարդալով ու լսելով հայ եղբայրակից ժողովրդի նկատմամբ կիրառվող բռնությունների ու կոտորածների մասին, համակվում է ըմբոստությամբ և վրեժի ծարավով։ Թուրք կառավարությունը, կանգնած լինելով դժվարությունների առաջ, ցանկանում է մեր օգնությունն ու բարեկամությունը, սակայն բոլորովին մոռանում է մեր ժողովրդի զգացմունքները հայերի հանդեպ»[5]։

«България» թերթի էջերում այդ օրերին տպվեց «Հայկական կոտորածները Թուրքիայում» հոդվածը, որտեղ ասված էր. «Աննկարագրելի են այն սարսափելի կոտորածները, որոնք տեղի են ունենում Հայաստանում։ Երիտթուրքերի կառավարությունը, օգտվելով պատերազմի առիթից, նախաձեռնեց հալածանք հայերի նկատմամբ, որը գերազանցում է համիդյան արյունահեղությունները։ Հալածանքների ու կոտորածների նպատակն է ոչնչացնել հայ ժողովրդին։ Մի անդամ ընդմիշտ վերացնել Հայաստանի անկախության և ընդհանրապես Հայկական հարցի մասին խոսակցությունները։ Իթթիհատական կառավարությունը իր խայտառակությունները արդարացնելու համար ամբողջ աշխարհի առաջ հայտարարում է, իբր թե հայերը ապստամբություն են պատրաստում։ Սակայն այդպիսի բան գոյություն չունի։ Այն անձնավորությունները, որոնք այսօր ձերբակալվում և ոչնչացվում են պաշտոնապես ճանաչված, հայտնի անձնավորություններ են, որոնցից ոմանք մեջլիսի անդամներ են։ Այսօր Հայաստանը ամբողջապես դատարկված է և սոսկալի օրեր է ապրում հայ ժողովուրդը։ Հանուն քաղաքակրթության և մարդասիրության, մենք պարտավոր ենք մեր բողոքի ձայնը բարձրացնել երիտթուրքերի բարբարոսությունների դեմ։ Բուլղարիան ի վիճակի է շատ բան անել հայ ժողովրդի վիճակը թեթևացնելու գործում։ Այդ ժողովրդի նկատմամբ մենք միշտ մեր համակրանքն ենք տածել...»[6]։

Պլովդիվում, «Հայաստան» թերթի խմբագրությունում և քաղական խորհրդի գրասենյակում բազմաթիվ նամակներ էին ստացվել բալկանյան երկրների և այլ գաղթավայրերից՝ համազգային ցույցեր և միտինգներ կազմակերպելու առաջարկություններով։ Սոֆիայում, բուլղարական կառավարության թույլտվությամբ ստեղծվեց Մեծ եղեռնի հատուկ հանձնաժողով, որը մի կոչով դիմեց բալկանյան հայկական գաղթավայրերի ղեկավարություններին։ Կոչում ասված էր. «Բնաջնջվող ժողովուրդին օգնու-

---

2 Նույն տեղում, 15 հունիսի 1915։

3 «Балканска трибуна», София, 1915, юли 18.

4 «Воля», София, 1915, юли 22.

5 Նույն տեղում։

6 «България», София, 1915, августъ 13.

թյան հասնելու ամեն ձեռնարկ գրեթե ապարդյուն մնացած է։ Կդիմենք վերջին անդամ մը ալ...»[7]։

Բուլղարահայ համայնքում գործող հայ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների նախաձեռնությամբ որոշվեց. ա) 1915 թ. օգոստոսի 4-ին փակել բոլոր հայկական հիմնարկ-ձեռնարկությունները ու խանութները, որպես ընդհանուր ոգի օր։ բ) Նույն օրը հայկական և բուլղարական եկեղեցիներում մատուցել հոգեհանդեսի պատարագ և կազմակերպել սգո միտինգներ։ գ) Հրավիրել օտար բարեկամներին, պետական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին և պարզաբանել Արեմտյան Հայաստանում տեղի ունեցած դեպքերը և կոտորածները, ընդունել բողոքի բանաձևեր և հանձնել բուլղարական կառավարությանն ու օտար երկրների ներկայացուցիչներին, հրավիրել մամուլի ներկայացուցիչների ուշադրությունը և գործնական միջոցներ նախաձեռնել սգո օրին համաղդային բնույթ տալու համար։

Այդ օրերին բուլղարական բոլոր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները, բուլղարահայ համայնքի թեմի առաջնորդ Դուրյան Եպիսկոպոսի գլխավորությամբ ներկայացան կառավարության նախագահ Ռոդոսլավովին՝ դիմումներ ներկայացնելով հայկական եղեռնի վերաբերյալ, խնդրելով նրա միջամտությունը չարդերը և հալածանքները կանխելու համար։ Դիմումներին կից ժողովների բանաձևերում բուլղար ժողովրդի ներկայացուցիչները իրենց գայրույթն էին արտահայտում երիտթուրքերի կատարած ոճիրի դեմ։

Բուլղարական կառավարության վարչապետ Ռոդոսլավովն ընդունեց պատվիրակություններին և հայկական թեմի առաջնորդին ու հայտնեց, որ ինքը քաջ ծանոթ է հայ ժողովրդի ողբերգական վիճակին և իր ժամանակին դիմել է Թուրք կառավարությանը, սակայն բոլոր դիմումները և բարի խորհուրդները ապարդյուն են անցել։ Նախագահը միաժամանակ հայտնեց, որ ամերիկահայերը և եգիպտահայերը նույնպես դիմել են Ֆերդինանդ թագավորին և վերջինս իր անունից համապատասխան կարգադրություններ է արել Կոստանդնուպոլսի բուլղարական դեսպանին և խնդրել Թուրքական կառավարությանը՝ դադարեցնել հալածանքները ու կոտորածները հայերի նկատմամբ։ Ռոդոսլավովը վերջում հավաստիացրեց, որ դիմումները և բացատրագրերը նույնպես կուղարկվեն Թուրքական կառավարությանը։ Բուլղարահայ համայնքի թեմի առաջնորդ Եպիսկոպոս Դուրյանի այն խնդրանքին, որ Թուրքիայից գաղթող հայերին բուլղարական կառավարության կողմից դժվարություններ ու մերժում չհարուցվի, բռնագաղթի հետևանքով սահմանն անցնելիս, կառավարության նախագահը պատասխանեց, որ վերջին 20 տարիների ընթացքում Թուրքիայից հալածված հայերը միշտ վայելել են և կվայելեն անկեղծ, անշահախնդիր հյուրընկալություն և ոչ մի հայից փաստաթուղթ կամ անձնագիր չի պահանջվի սահմանն անցնելու դեպքում[8]։

Պատերազմի ընթացքում և նրա ավարտից հետո մոտավորապես 3000 հայեր, լքելով թրքական բանակի շարքերը, անցել էին Բուլղարիա։ Բուլղարահայերը մեծ հոգատարություն ցուցաբերեցին դնդակահարությունից փրկված հայ դինվորների նկատմամբ։ Նրանք սերտ կապերի մեջ էին Կոստանդնուպոլսի, Ադրիանուպոլսի, Արևելյան Թրակիայի մյուս քաղաքների հայերի հետ։ Բուլղարահայերը հսկայական աշխատանք կատարեցին եղեռնից մազապուրծ եղած որբերին ու այրիներին օգնելու գործում։ Կոտորածներից ու աքսորավայրերից փրկված հայ ժողովրդի բեկորները օգնության մեծ կարիք էին դրսևորում։

Բուլղարահայ համայնքից հավաքված դրամական միջոցները ու հագուստեղենն ուղարկվում էր Կոստանդնուպոլիս։ Օգնության էին փութացել ոչ միայն հայերը, այլև բուլղարները։ Այդ օրերին «Պալքանյան մամուլ» թերթի էջերում լույս տեսավ Պլովդիվի հայերի կոչը, որտեղ ասված էր. «Հայրենակիցներ, տեղյակ ենք այն սարսռազդեցիկ ու սրտակեղեք վիճակին, որ կգտնվեն Տաճկաստանի մեր տեղական եղբայրներն ու քույրերը, որոնք այսօր անտուն, անօթևան կվերադառնան։ Ոչ մի օտար իրենց օգնության կհասնի։ Զմեռային ցուրտը, անոթությունը, փոխիկ հիվանդությունները հոն են ի սպառ մահացնելու համար դժբախտ ցեղի մը այդ վերջին մնացորդները։

Ուրեմն, այս վայրկյանիս անհետաձգելիորեն կարևորն է այդ թշվառները մահվան Էրաններից փրկելը։ Անոնք տառապեցան, որովհետև կկրեն անուն մը, որ մեզ է...», որովհետև կխոսեն լեզու մը, որ մեզ է...»[9]։

Հայ և բուլղար ժողովուրդների անշահախնդիր բարեկամությունն ու փոխօգնության ավանդույթները ստեղծվել են դարերի ընթաց-

---

[7] «Պալքանյան մամուլ», Ռուսչուք, 14 ապրիլի 1915։

[8] «Հայաստան», Պլովդիվ, 26 օգոստոսի 1915։

[9] «Պալքանեան մամուլ», Սոֆիա, 12 դեկտեմբերի 1918։

քում։ Երկու եղբայրական ժողովուրդների համագործակցությունը ամրապնդվել էր օսմանյան ծանր լծի դեմ համատեղ պայքարի ընթացքում և հետագա ժամանակաշրջանում։ Բուլղար ժողովուրդը առանձնահատուկ կարեկցություն դրսևորեց հազարավոր հայ տարագիրներին օգնելու և ապաստան տալու գործում 1915 թ. մեծ եղեռնի ու 1922 թ. Թուրքիայից բռնագաղթի ժամանակ։

Ներկայումս, երբ ամբողջ աշխարհի առաջադեմ հասարակայնության համերաշխությունը և կարեկցանքը արտահայտվեց հայ ժողովրդի արդար պահանջների իրականացման ու ահեղ երկրաշարժի հետևանքները վերացնելու գործում, բուլղար ժողովուրդը առաջիններից էր, որ նորից դրսևորեց իր վաղեմի բարեկամության, համերաշխության ու փոխօգնության զգացումները և նյութական ու բարոյական աջակցությունը։

Պատմ. գիտ. դոկտոր Զ. Մ. ՂԱՍԱԲՅԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԶԻԱԿԵՐՊ ԱՐՁԱՆԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի տարածքում ապրող նախնադարյան ցեղերի տնտեսական կյանքում կարևոր տեղ է գրավել ձին, որ օգտագործվել է տարբեր բնագավառներում, այդ թվում մարտակառքերում[1] և տրանսպորտում։ Ձին օգտակար դեր է խաղացել նաև քաղվոր և կիսաբոշվոր անասնապահության ասպարեզում։

Հայաստանի տարբեր հնավայրերում, այդ թվում Քոսի ճաքերում[2], Շենգավիթում[3], վայրի և ընտանի կենդանատեսակների ոսկորների հետ հայտնաբերվել են ձիու ոսկորներ։ Նոյեմբերյանի Կարմիր գյուղի III և Աղաջանի I հազարամյակների դամբարաններից խոշոր եղջերավոր անասունների, խոզի, աղխարի և վայրի կենդանիների ոսկորների հետ հայտնաբերվել են նաև ձիու ոսկորներ։ Խոշոր եղջերավոր կենդանիների ոսկորների հետ ձիու ոսկորներ են հայտնաբերվել նաև Գառնիում, ինչպես նաև Էլարում[4]։

Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններում, դեռ երկրորդ հազարամյակի մարտակառքերը լայն կիրառում են ունեցել։ Մարտակառքերի բրոնզաձույլ մոդելներ են գտնվել Լճաշենում և Լոռի բերդում[5]։ Նոյեմբերյան Հարոնաքարի հողերի դամբարանադաշտից պեղումների ժամանակ հայտնաբերվել է մարտակառքի մոդելով բացառիկ սափորը[6] (նկ. 1)։ Պաշտամունքային այդ սափորը ունի ուղղանկյունաձև երկու բռնակ, որոնց հակադիր կողմերում դրվագված են մարտակառքը նետած, հաստ անուրներով լծված երկու վազող ձիեր և նրանց հետապնդող, զույգ ձիերով սլացող մարտակառքը։ Դամբարանադաշտի նյութերը վերագրվում են մ. թ. ա. XIV—X դդ.։

Նկ. 1

Ս. Ա. Եսայանի ենթադրությամբ մարտակառքերը Հայաստանում լայն կիրառում են ունեցել դեռ երկրորդ հազարամյակի վերջերից[7]։ Լճաշենի № 1 դամբանաբլրից գտնված երկձիանի կառքի բրոնզե մոդելը[8] նման է Նոյեմբերյանում հայտնաբերված մարտակառքի մոդելին։ Մարտակառքի պատկերներով

1 С. А. Есаян. Доспех Древней Армении. Ереван, 1986, с. 3.

2 Է. Խանզադյան. Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. 3-րդ հազարամյակում. Երևան, 1967, էջ 40։

3 Б. Б. Пиотровский. Посещения медного века в Армении, с. 170.

4 Е. Байбуртян. Псевдонеолитические поселения в Армении, с. 40.

5 С. А. Есаян. Древняя культура племен северо-восточной Армении, табл. 10—11.

6 Ս. Ս. Զիլինգարյան. Նոյեմբերյանում հայտնաբերված մի դրվագված սափորի մասին.—«Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2։

7 С. А. Есаян. Древняя культура..., с. 223.

8 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 139.